

ւերակացնել և 19 ըդ դարուն Հայ մար-
դը սպաննել կայ :

Գաւառացիք 'ի զուր կ'անկէք աչ-
ուքնիդ դէպ 'ի Պոլիս . Պոլիս սխալ
քայլեր առաւ , նա ալ ջեր օգնութեա-
նը կտրօտ է :

Եթէ չ'լսէք որ Պոլիս կարգ-խընդ-
րոցի աղտոտ թուղթը պատռած է ,
եթէ չ'լսէք որ Պոլիս ազգային վար-
չութիւնը սևազգեստ շահատակներու
բանակատեղի ըլլալէ և նոցա զէնք և
զօրք տալէ դադրած է . եթէ չ'լսէք
որ Պատրիարքարանի գրասեղանին վը-
րայ դարուս այս անհրաժեշտ խնդիրը
որ է դրամ և կրթութիւն նստած . լաւ
է մատերնիդ աչուքնիդ խօթել քան
թէ Պատրիարքարանէն բարիք ակնկա-
լել : Դուք գաւառացիք բոլոր ինչ որ
կրնաք . քիչ խօսեցէք և շատ գործե-
ցէք . հարկը անգամ ջուր ջուր բերէն
աւելի աղէկ է տասն անգամ մատդ
ջուրը թրջիւ և ծախսի եղբորդ բերանը
տանիս : Գոտուկան մեր մէջ անաչառ
և հեռատես մարդիկ որ ժամանակին
շատ ճշմարտութիւններ լայանեցին ազ-
գային մարմինը կառավարող գլխոյն ,
բայց երթալով Պոլսոյ մէջ խօսքերը
այնչափ չափցան և խօսողները այնչափ
առատացան որ այս գլուխը շուարե-
ցաւ տեսնելու թէ այս խօսքերուն մէ-
ջէն ո՞րն է բնութիւն և ո՞րն է ատելիւն
Պոլսոյ մէջ կըսեն վիճաբանութիւնը
կարծեց ընդհարումն է , երբ կարծիք
իրարու կընդհարին լոյս կը ցայտէ . ու-
րեմն վիճաբանութիւնը լուսաբանու-
թիւն է . դարձեալ Պոլսոյ մէջ կըսեն
այս անտիպ վէճերով մինչև յերբ կոր-
սընցընենք մեր թանկագին ժամերը .
ալ խօսքերու գործերը յաջորդեն :

Փարիզու վարչական բառերէն բառ-
չմնաց Պատրիարքարան լեցուեցաւ . օ-
րինակի համար . յանձնաժողով , մաս-
նաժողով , ծրագիր , տեղեկագիր , ա-
տենապետ , ասենադպիր , աջակողմ-
եան , ձախակողմեան ևն . իսկ գիտու-
թեանց բառերը . . . երբ պիտի թարգ-
մանուին և լեցուին մեր բառարաննե-
րու մէջ , զայս ոչ ոք գիտէ : Միթէ ի-
րաւունք չունին հին մարդիկը որք կը-
սեն ամիրաներու ժամանակ որչափ որ
միապետութիւն և բռնութիւն կար ալ
նէ գոնէ գործ կը տեսնուէր , բայց հի-
մայ 10 տարիէ 'ի վեր չոր խօսքէն և
կուռէն զատ ինչ կայ :

Վերապէս գաւառացիք ալ Պոլիս
պիտի խօսի ինչու որ խօսքին վրայ դըր-
ուեցաւ նորա հիմք , դուք գործեցէք
և անոր ալ օգնեցէք :

Բայց առաջ դժբաղդութեանս .
ահա գաւառացիք ալ Պոլսոյ օրինակին
հետեւած են , ամեն տեղ կուի առաջ-
նորդի , վարժապետի , քահանայի վի-
ճաբանութիւններ . ամեն տեղ տուե-
լութիւններ և անվերջանալի խօսքեր .
ուրեմն ներքը կուի դուրսը կուի . ազգ-
մի տառապելալը եմք մենք ո՞վ ապրե-
ցուցէ զմեզ 'ի մահա անէ աստի :

Քիբասօն 8 ինտր . 1872

Կ. Վ. Ա. Ա. Ա.

Կ. Պոլիս , 25 ինտր . 1872

Կարգացի Յ. Միշլէյի Սէրը և զմայ-
լանօք ի անհրաժեշտ պէտք մը զգա-
ցի նորա թարգմանիչ Աբրահամ Էֆէն-
տի Մուրատեան սգնիւ երիտասարդին
իմ խորին շնորհակալութիւնս յայտնել
հրապարակաւ , որ իւր աշխատանքը չէ
խնայած սորա պէս բնօրի և օգտա-
կար դրքի մը 'ի լոյս բնծայութեան .
չեմ ուզեր չուալ գովեստներ կարդալ
Յ. Միշլէյի բեղմնաւոր տաղանդին ար-
դիւնքն եղող սոյն երկասիրութեան

վրայ , այլ միայն պարզապէս կաղաչեմ
ամեն Հայերու որ վերոյիշեալ բարոյա-
լից հեղինակութենէն մէյ մէկ հատ
գնելով 'նոյն իսկ իրենք կշռեն նորա
արժէքը և քաջալերած ըլլան իւր
ամենահմուտ թարգմանիչը :

Կաղաչեմ հաճեցէք հրատարակել
սոյն երկտողս , որով միամիտ և այլն :
Յովհաննէս Մ. Սամահճեան

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԴ

Առ երեսփոխանական ընտրող Խաղիւղի
Ընտրողական ժողովոյ նախորդ պաշ-
տօնական ծանուցման համեմատ թա-
ղիս հրաժարեալ երեք երեսփոխանաց
տեղ նորերուն ընտրութեան առաջին
քուէարկութիւնն անցեալ կիւրակէ
(վերջում 20) որոշեալ ժամուկ կա-
տարուելով քուէից բացարձակ առա-
ւելութեամբ ոչ ոք երեսփոխան ընտ-
րուցաւ :

Հետեւեալը առաւելագոյն քուէ
բոտացողներէն կրկնապատիկ թուով
հետեւեալ ցուցակը պատրաստուելով

Միքայէլ Էֆ. Գազաճեան	Պօղոս » Ոսկերիչեան
Յովհաննէս » Եղիազարեան	Պետրոս » Փափագեան
Յապոր պէյ խանտանեան	Սարգիս Էֆ. Արապեան

Երկրորդ անգամ քուէարկութիւն
ընել որոշուեցաւ յառաջկայ մարտ
ամսոյ 5 կիւրակէ , առաւօտեան ժամ
3 էն մինչև 7 , ուրկէ անմիջապէս վեր-
ջը քուէհամարը պիտի սկսի յատենի
եկեղեցոյ և 'ի ներկայութեան ընտ-
րողական ժողովոյ :

Աւելորդ չեմք համարիր յիշել որ
այս երկրորդ քուէարկութիւնն ալ ա-
ռաջինին յար և նման եղանակաւ կըլ-
լայ , սա՛ տարբերութեամբ որ քուէ-
արկութեան անգամ միայն վերոյիշեալ
վեց անձանց մէջէն երեքին տարու են
քուէին , և անոնցմէ զատ անուանց
տրուած քուէներն անբնութենի են :

'ի Դիմաց ընտրողական ժողովոյ
Խաղիւղի նախագահ
27 ինտր . 1872 Գէորգ Բենայ . Արծրունի

Օրտու . 23 ինտր . 1872

Խմբագիր ,

Օրագրի 670 թուոյն մէջ «Սոխակ»
ստորագրութեամբ նամակ մը կարդա-
ցի , իբր պատասխան մեր նամակին՝ որ
ձեր 1828 թուոյ մէջ հրատարակած է-
իք որն որ՝ նախորդաց մէջ «Օրտույի
ոմն» ստորագրութեամբ նամակի մը սը-
խալունքը կուղղէր :

Այս Սոխակ Էֆէնտին չեմ գիտեր
թէ , յարդ ո՞ր էր որ իր ձայնը ասանկ
անպատեհ ժամանակ մը բարձրացընել
ստիպուեցաւ , կը խնդրեմ իրմէն որ
բարեհաճի իմ նամակս ուշի ուշով կար-
դալ . քանզի , անոր մէջ ո՞չ երիտա-
սարդաց ջանքը ուրացուած է՝ և ո՞չ
իսկ Անդրեասեան Յ. Էֆէնտին ձեռքէն
Հայկուհեան ընկերութեան հիմնադրու-
թեան պատիւը կորցել աշխատուած :
Նաեւ այս սխալական սխալացոյց Սո-
խակ Էֆէնտին խիստ մեծ սխալման
մէջ կիցայ Օրտուցւոյն ներկայ վիճա-
կէ՝ անցելոյն փոխանակելովը , բայց ա-
նոր այնչափ գովեստիւր իմ և որդւոյս
վրայ խօսած ատեն՝ ևս չեմ կրնար այդ-
փառքը միայն ինձ սեպհականել քան-
զի , ազգիս ծառայած ատենս շատերն
ինձ օգնական ունէի քանզի նոցա պա-
տիւն ալ անձիս պէս կը սիրեմ . և քան-
զի , իմ կանխաւ դրածո ճիշդ է , և
ինչպէս որ՝ նախկին նամակաւս ցու-
ցեցած եմ , դարձեալ կը խոստովանիմ
թէ , Օրտույիք ամէն մասամբ գովու-

թեան արժանի ընթացից մէջ են , «Ե-
նիչերին երուն» օրովը շտաբան կըլլար .
բայց անոնք ներկայիս մէկ դասն ըլ-
լալով , ինչպէս ըսած էինք նախորդին
մէջ ալ , արդ Օրտուցիին վորձառու է ,
և չուզեր իր վրէժը դարձնէն առնել .
և ծերոց ու չափահասից ինչ շուտով
չհաւնիլ սկսաւ այդ Սոխակ Էֆէնտին .
որ անոնք դժուարաշարժ են կըսէ ,
արդեօք շարժում ըսելով հրապարա-
կաց մէջ վարվաղէի պիտի հասկընանք ,
եթէ այդպէս է՝ իրաւունք ունի . իսկ
եթէ , գործել է այդ շարժումը՝ Օրտու-
ցւոյն երիտասարդը տակաւին նոր ոտ-
քի վրայ կայնիլ սկսած է , այն ևս , չա-
փահասից օգնութեամբ :

Երկայն խօսիլ հարկ չեմ համարիր ,
Սոխակ Էֆէնտին թող չը կարծէ թէ ,
թշնամական էր իմ գրութիւնս՝ այլ
ճշմարտութիւնը երեւան բերելու հա-
մար . և արդէն ինչ որ խօսած եմ ար-
դի գրութեանս մէջ՝ անոնք ճիշդ են .
և յաւիտեան պիտի մնան :

Շու ամիսէքի հաժմատիւր Մշակ
ղաղթեմաբնտա օգուստու շուտուղուն-
տան , այնէն տերմ իտէրից :

Պ. Յարութիւն Աբէլեանցը , որի մա-
սին մենք նորերումս խօսեցանք , Յիւ-
րիսի համալսարանում քննութիւն բո-
նետուց և յօդած առաջարկելուց յե-
տոյ , ստացաւ դօկտօրական գիտնա-
կան աստիճանը :

Պ. Արեւելանցը քիմիքոս է : Նորա
յօդովածի վերնադիրն է Խոյն Կէլ-
բէն :

Երիտասարդ դօկտօրը Ներսիսեան
դպրոցի աշակերտներին է և հանգուց-
եալ Էֆէնտեանի որդեգիրն է :

— Պարսկաստանի մի մշտաբազմ
մէջ կամեցան հիմնել մի եւրոպական
ուսումնարան , որտեղ առարկաներ կու-
սուցանվէին ֆրանսիարէն լեզուով : Այդ
բանը լսելով , մօլանները հաւաքուե-
ցան և համադրեցին ժողովրդին չը տալ
իր երեխաները այդ տեսակ ուսումնա-
րանը , որովհետեւ , ասում էին նոքա ,
երբ այդ ուսումնարանի մէջ աւարտած-
ները մեռնելով յաւիտեական դա-
տաստանին կը ներկայանան և հրեշ-
տակները , ինչպէս վկայում է Ղուրա-
նը , կը դիմեն նոյա զանազան սովո-
րական հարցեր առաջարկելով , —նո-
քա պարսկերէն չը գիտենալով , չեն կա-
րողանալ հարցերին պատասխանել , և
ուրեմն կերթան դժոխքը : Այսպիսով
ուսումնարանը չը յաջուցաւ , որով-
հետեւ ոչ մի աշակերտ չը գտնվեցաւ . . .

— Պարսկաստանի մի գիւղում մի
Հայ-կաթօլիկ աղջիկ սիրահարուել էր
մի Հայ-լուսաւորչական երիտասարդի
վերայ : Տեղի կաթօլիկ միտինէրը (քա-
րողիչ) երկուր ժամանակ ընդիմադրու-
թիւն էր անում նոցա պատկին , սպառ-
նումէր աղջկայ ծնօցներին դժոխքի դա-
նազան չարչարանքներով , —բայց ինչ և
իյէ երիտասարդներին պատկիցին , Հար-
սանիքի միւս առաւօտը աղջկան և ե-
րիտասարդին սպանված գտան իրանց
անկողնի մէջ :

— Համազգային հեռագրական ըն-
կերութիւնը՝ հաղորդում է մեզ Ս. Պե-
տերբուրգից , որ Նորին Կայսերական
Մեծութիւնը բարեհաճել է հրամայել
երկրաշարժից փնտրված Շամախու բնա-
կիչներին օգնութիւն տալ , նշանակե-
լով պետական գանձարանից 20 հազար
ռուբլի արծ :

— «Մեղու Հայաստանի» լրագրի
յայտարարութիւնը հրատարակվեցաւ
նորերումս : Խմբագիրը խոստանում է
նոր խմբագրութիւն կազմել :

— Երեւելի Գերմանական աշխարհա-
գիր Պ. Կիպէրտ հրատարակեց 1870 թը-
ւին երկու աշխարհացոյցներ , որոնք
Հայաստանին են վերաբերում , մէկը
«Ասիական ճանկաստան» միւսը «Եւրո-
պական» , որոնք 27րդ և 28րդ տախտակ-
ներ են Պ. Կիպէրտից հրատարակվող
մի մեծ առ ձեռն աշխարհացոյցի Այդ-
տեղեկութիւնը հաղորդում է մեզ Պ.
Անդրէաս Արծրունին , և աւելացնում ,
թէ «այս ամեն մի տախտակի գիրք ,
որքան կարողացայ տեղեկանալ 15րդ-
բէր դրոշ է (այսինքն մօտ 60 կօպ.) : Պ.
Կիպէրտի վերայ խօսելով , շարունա-
կում է Պ. Արծրունին , չեմ կարող լու-
թեամբ անցնել , որ այս գիտնականը ,
ինչպէս մասնաւոր կերպով իմացայ ,
գիտաւորութիւն ունի հրատարակել
կրկնիկայի մի աշխարհացոյցի և նոյնպէս
մի հայագիր աշխարհացոյցի Հայաս-
տանի» :

— Երեւանից ստացած մի մասնաւոր
նամակից քաղում ենք յետագայ սար-
սափելի պատմութիւնը : Մի հայ մարդ
դատարանի կանչած լինելով , որպէս
վկայ , —սուտ վկայութիւն էր տուել ,
Քանի մի ժամանակից յետոյ նորա
խղճմանքը սկսեց նորան տանջել . նա
առաջ սկսեց ցուրտ զգալ , յետոյ դող ,
քանի մի օրից յետոյ ցնորվել . . . :
Կիրակի մի օր եկեղեցու առաջ հաւաք-
ւած ժողովուրդը չը ջապատում էր մի
մարդի , որը ձեռները կուրծքին խը-
փելով կրկնում էր , թէ Աստուած նո-
րան հրամայել է գլուխը երեք անգամ
խաչքարին զարկել , որ նրան ներուի
նրա մեղքը . . . : Ներկայ գտնվողնե-
րի առաջ բացվեցաւ մի սարսափելի
տեսարան . —ցնորված մարդը երեք
անգամ խփեց իր գլուխը խաչքարին ,
—իսկ երրորդ անգամ դադարելը պա-
տուովելով բացվեցաւ և ուղեղը դուրս
թափեցաւ :

— Իտալական ժը Պիրիթօ լրագրի
պատմում է յետագայ անցքը , իտա-
լացի Բէլգիօիազօ քաղաքում մի հի-
ւանդ երիտասարդին տրվեցաւ բժշկից
մի գնացնող դեղ , որը պատճառեց մի
խոր և երկար քուն : Երիտասարդին
մեռած համարելով , դրին դադարի
մէջ և տարան եկեղեցի : Վերջին մեկս
խփելու ժամանակ , դադարից լուսե-
ցաւ մի անսովոր ձայն : Շատերը եր-
կիւղից փախան , բայց բացաւորա-
պէս , նախապաշարմունքից ազատ քա-
նի մի մարդիկ գտնվեցան , որոնք դա-
դարը բաց անելով , կարողացան վեր-
կել երիտասարդին : Այժմ՝ երիտա-
սարդի ազգականները կամենում են
բժշկի դէմ մի պրօցես սկսել :

— Ընթերցողի ուշադրութիւնը դար-
ձնելով Օր- Ֆէրրարի բէնէֆիսի վե-
րաբերութեամբ Պ. Հ. հետաքրքիր նը-
կատողութեան վերա , մենք մի բան
ենք աւելացնում —այն է , որ Օր-Ֆէր-
րարի ճշգրտութեամբ երգած հայերէն
«Ժիճեռնակը» մեզ ցոյց տուեց հայե-
րէն լեզուի զարմանալի յատկութիւն-
ների թուումը և հարաւային ազգերին
նորա ճիշդ արտասանութեան մատ-
չելի լինելը : —Բայց այդ հետաքրքիր
դէպքից յետոյ , մեզ աւելի էլ ան-
հասկանալի է , ինչի՞ հայ կրթված օ-
րիօրդներին և կանանց հայերէնի ար-
տասանութիւնը մատչելի չէ :

(Մշակ)

ՍՍՀԻՊ ՂԱԶԷՐԱՆ
ԿԱՐԱՊԵՏ Ե. ՓԱՆՈՍԵԱՆ

Գալթիտա Բէնճէմյակ բաղարձատ
Նօ 29 իստի խանընտա :